ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

20 ապրիլ, 2026 թվականի № 37-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի ապրիլի 16-ի N-ՀՄ-02/181/26 գրությունը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2026 թվականի մարտի 16-ի № 26-Լ որոշման համաձայն կատարված գնահատման արդյունքում անկախ գնահատողի («Երևանի ապրանքային բորսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) կողմից ներկայացված N 26/05 հաշվետվությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի 2026 թվականի մարտի 16-ի № 26-Լ որոշմամբ նախատեսված՝ Ընկերությանը պատկանող գույքի շուկայական արժեքը սահմանել համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

20 ապրիլ, 2026 թվականի

ք. Երևան